## Արձանագրության 3

**Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/159 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

21.08.2019թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Ա. Հովհաննիսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

### 1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն և մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Իրտիգ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/159 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/159» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Իրտիգ» ՍՊԸ-ին և ներկայացնել **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի վթարային**

**պատշգամբների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

---

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ռ. Աբրահամյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հովհաննիսյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան